

# ՅԱՒԵԼՈՒԱԾ "ՆՈՐ-ՕՐԻ"

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ԵՕԹԸ ԹԻԻԷՆ

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ ԱՂԵՔԱՆԴՐԻՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Գ.

12 Դեկտեմբեր 1897էն մինչև 25 Մարտ 1900 Աղքատասիրաց Բարեգործական ընկերութեան վերակազմութեան նախագործարարական առաջին ժողովին մինչև վերակազմված ընկերութեան վերջին ընդհանուր ժողովը, ընդ ամեն 12 գումարմանց նկարագրութիւնը, հանդերձ մի քանի բացատրութեամբ գրուեցաւ ի վերեւ, բաւական մանրամասն կերպով մը, ընկերութեան ատենագրութեանց պաշտօնական ամսագրին հետեղութեամբը:

Կարևոր շատ մը կետերու մասին ստիպուեցայ չափերսնելու մէջ, բաւ առ բաւ արտագրել յիշեալ տոմարին պարտականութիւնները, որիչ նուազ կարևոր տեղեր համառոտագրութեամբ բաւականացայ, իսկ մի քանի պարագայից մէջ միայն հարկ եղաւ ինձ աւելի մանրամասն կերպով մը յտալ ըրել այն իրողութիւններն որք իրենց խիստ ցաւառիթ ընութեանը պատճառաւ Դիւանին կողմէ հարեանցի յիշատակութեան մը միայն առարկայ եղած էին:

Հրապարակաւ և ուղղակի՝ կոչում կ'ընեմ վերջիշեալ 12 գումարմանց իւրաքանչիւրին ներկայ գտնուող Դիւանի անդամաց և ընդհանուր ժողովականաց անխափ սոյն արձանագրութեանց ճշտութեանը մասին իրենց զիտողութիւնները յայտնել եթէ ունին:

Այլով ընթերցողներն առանց ու և է պատարտութեան պիտի գտնեն հոն Տ. Լ. Մկրտչեանի պատմած իրողութեանց մեծագոյն մասը իրենց միակ ճշգրտ և վաւերական ձևին մէջ:

Ընթերցողացս ուրեմն կը թողում ընել գատաւաւոր երկու նկարագրութեանց վրայ, որոց մին եթէ թաղական խորհրդոյ քարտուղարին հարազատ ստորագրութեամբ նուիրագործուած է, միւսն ալ ընդհանուր ժողովները կազմող բոլոր անդամաց բուններով վաւերացուած է, վաւերացում՝ որուն նոյն ինքն Տ. Մկրտչեանի և համակուցաց, իրեւ ժողովական, մասնակցութիւնը, գէթ իրենց նկատմամբ բացարձակապէս անվիճելի հանգամանք մը պէտք էր առած ըլլար անոր:

Ինչ որ ապացուցուած է վերոյիշեալ ատենագրական արտագրութիւններով, վճառապէս ապացուցուած է հետեւապէս իմ կողմէ բաւ մ'իսկ՝ եւս յաւելուլ անպատահ նկատելով պատրաստ կը մնամ հիմայ ձեռք առնուլ Տ. Լ. Մկրտչեանի այն հաստատութիւնները միայն որոց արձեւին աստիճանին ընդհանուր ժողովոյ վաւերական ընթերցողը գրուած չէ առկային:

Մտացման վտանգէն զերծ մնալու համար, յիշեալ պատմութեանց վրայ սկիզբէն մինչև վախճանը վերջին ակնարկ մը կը պտտցունեմ, և վեր կ'առնում հետզհետէ այն բոլոր բնի շատ կարևոր իրողութեանց յիշատակութիւնները որք գիտատուած չեն նախընթաց վաւերական ապացոյցներուն միջոցաւ:

Առաջին ատենութեամբ ինձ թուածին հակառակ, չափազանց երկար և դժուարին աշխատութիւն մը պիտի ըլլայ այս, նկատելով մանաւանդ որ գեղքերը այնպիսի կամուր ժամանակագրական խառնաշփոթութիւններով խճողուած են Տ. Լ. Մկրտչեանի պատմութեան մէջ և անդամաց մէկ և միւս մասերուն, կամ լաւ եւս, ըստ իւր բացատրութեան, «թաղական» և «հակաթաղական» խմբերուն՝ վերագրուած կարծիքները և արարքները իրենց միջև այնպիսի հեղտիւ և փորձ ձեռնածութեամբ մը կը փոխանակուին ըստ պահանջմանց իրեն պէտք եղած ապացուցութեանց, որ, ապահով եմ թէ, ոչ որ պիտի կարենար իրաւամբ մեղադրել զիս եթէ երբէք հիւսնազանց ուղեղ չյաջողէր այդ անորինակ քառսին մէջ առաջնորդել գատողութիւնս անկորուստ:

Տ. Լ. Մկրտչեանի այս բաւականապէս բարդ գրա-

կան հանգոյցին մէջ հիմնական կենտրոն մ'եւս կայ, եթէ երբէք պէտք մնացած էր անոր ալ, և որ է «հակաթաղական» տարր», «Շնորհքեան խմբակ» և որիչ խել մը համարձեք բացատրութիւններու, ինչպէս նաև «անոնք», «իրենք» են. բաւերու անխափ գործածութիւնը՝ նշանակելու համար երբեմն՝ Տ. Լ. Մկրտչեանէ և ասոր համարձեքներն զուրս գտնուող մեծամասնութիւնը ամբողջապէս, և երբեմն՝ — ըստ պահանջի պարագային — առանց մէկ աւելի կամ նուազ մեծ հատուածը, մինչև իսկ ասոնցմէ մէկ երկու հոգիները միայն:

Պարկեշտ և խելանի ընթերցողին բաձարցակապէս անհաւատալի պիտի թուէին այս իրականութիւնները, եթէ չապացուցանէին անոնց գոյութիւնը Տ. Մկրտչեանի այս պատմական լո՛ւրջ ուսումնասիրութեան մէջ, որուն հեղինակին գրական տաղանդը, և պատկառանք ներշնչող պաշտօնական և հանրային գանազան բարձր պաշտօնները «արտասահմանեան որիչ երկիրներու հայերուն» անգամ ծանօթ են:

\* \* \*

## I

Տ. Լ. Մկրտչեան կը գրէ թէ «Կանոնագիրը խմբ. «բարեկեցաւ», Բնդ. ժողովէն ընդունուեցաւ և թաղ. «խորհրդին ալ ասոնց ընդունութեան վաւերացուեցաւ, «ժողովի ակնդարները գործութեան պատճառ մը «չունին, ըստ որում նոր կանոնագրով Աղք. ընկերութիւնը անխափ մարմին կը հանդիսանար, ինչ որ իրենց «բարձանքն էր արդէն: Ասկէ վերջը ձեռնարկուեցաւ «Մայր-Դիւանի և Տնօրէն ժողովոյ ընտրութեանց: Թաւ «դակն խորհրդոյ հակառակ սարրը իր ընտրելիները յտալ կը բեր, իսկ Թաղ. խորհրդոյ հետ «մասնաւոր հաշիւ յունեցող սարրն ալ իրենց ընտրելիները «Պատահեցաւ որ վերջինները յաղթանակ տարին, «ինչ որ պարտաւոր մարմինն մեծ ահաճութիւն «պատճառեց և ակնկալ մեկեւ խօսք մէկ ըրին «Աղ. ընկերութեան որաւ չի վճարել»: Մինչդեռ, ժամանակ մը յետոյ, «բար անցած դարձանքերուն փոխափայտար համակերպեցանք, անհրճուող վճարելով մեր քաճակները ու ո՛չ թէ իրենց պէս, առաջին պարտութեան հանդէս, վրեժնիս աղիսներէն յունեցող:»

—Այս խօսքերուն միակ և բացորոշ իմաստը սա է թէ ժողովին մեծամասնութիւնը թաղական խորհրդոյ հակառակ տարրէն կը բարկանար, նոյնպէս նաև և մանաւանդ կանոնագրի խմբակը Յանձնաժողովը, իսկ Դիւանի և Տնօրէն ժողովոյ նորընտիր անդամները կը վերաբերէին թաղ. խորհրդոյ հակառակ չեղող տարրին, և «պարտաւոր մարմինն». իմս՝ «Թաղական խորհրդոյ հակառակ սարրը» ակնկալ մեկեւ խօսք մէկ ըրին Ընկերութեան դրամ չի վճարել:»

—Ճշմարտութիւնը անհերքելի կերպով հաստատուելու համար, թողտուութիւն կը խնդրեմ Տ. Լ. Մկրտչեանէն իրմ փոխ անուղ ինձ հարկ եղած գրեթէ բոլոր ապացոյցները, թէ վերոյիշեալ հաստուածին և թէ բոլոր յաջորդներուն քննութեանն առթիւ:

Ա. — Եթէ ժողովին մեծամասնութիւնը «հակաթաղականները» կը կազմէին, արդեօք որո՞նք էին ընտրութեանց մէջ պարտաւորները:

Բ. — Եթէ կանոնագրի Յանձնաժողովը «հակաթաղականներն» էր և Տնօրէն ժողովը «թաղականներն», ինչպէս կ'ըլլայ որ իրականին մէջ մի էր իրոյն յորս ակնկալ մարմիններուն մէջ և բացարձակ մեծամասնութիւնը կը կազմէին թէ՛ Յանձնաժողովոյն մէջ որ 5 անդամներէ՛ն թէ՛ Տնօրէն ժողովոյն մէջ որ 7 անդամներէ բաղկացած էին:

Գ. — Եթէ «հակաթաղականները» ակնկալ մեկեւ իրաւ չի վնասեցիկն այնուհետեւ, ինչպէս կ'ըլլայ որ իրենց ամենէն կանոնաւոր վճարողները միշտ ասոնց մէջ գտնուած են, սա գերազանց ապացոյցով որ Ընկերութեան ընդհանուր անգամաց մեծամասնութիւնն ալ ասոնց կազմած են մինչև վերջը:

Հակառակը պատահած է սակայն Տ. Լ. Մկրտչեանի «թաղականներէն» շատերուն որոց վրայ կարգը պիտի գայ խօսելու:

Ինչպիսի . . . համարձակութեամբ Տ. Լ. Մկրտչեան կը ներք ինքն իրեն զեղծանել այսպէս իր ընթերցողաց վստահութիւնէն, միանգամայն գէթ իր անձին պարտական եղած յարգանքէն, չմտածելով վայրկեան մը այն անարգանաց մթութեան զոր կը նետէ հանրութեան երեսին հաւատարմով թէ իւր պատմութեանց մէջ ակնհեր հանգիստ հակասութիւններն անյայտ և անգաղի պիտի անցնէին:

Տ. Մկրտչեան հաշուի խօսք ալ ընելով, կ'ըսէ թէ «թաղական խորհրդոյ հակառակ տարրը» «թաղական խորհրդոյ հետ մասնաւոր հաշիւ ունեցող տարրն» է: Այս չապացուցուած բայց ինքնին՝ անտեղեկ ընթերցողաց վրայ իր ատենակցները նկատմամբ քննականապէս շատ նըպատար տպաւորութիւն մը յտալ բերող հնարամիտ խօսքը, մասնաւոր նշանակութեան արժանի է:

Իմ գիտցածս՝ (և Աղեքանաղիոյ մէջ չկայ մէկն որ չգիտնայ զայս, բայց ի Տ. Մկրտչեանէն և հաւանաբար Տ. Տր. Մխար ժամկոչեանէն), թաղական խորհրդոյ հետ ու և իցէ հաշիւ չունի այն տարրը զոր կը կազմէ «հաւատացեալներս» և եւս. մինչդեռ արդարանալով այն արտօնութեամբ որ կը տրուի ինձ, կարող եմ հակառակին ապացոյցը, որով ընթերցողաց, ինչպիսի իրմէ՛ն Տ. Լ. Մկրտչեանէն՝ հաստատել թէ ինքը և Տ. Տր. Մխար ժամկոչեանը («թաղական տարր») ին պատուարեան պարազուրկները) անձնուիրաբար կը կատարեն կամ կատարած են մինչև այսօր, մին «թաղական խորհրդի» քարտուղարի և միւսը «թաղական խորհրդի» բժշկի պաշտօնները:

Եթէ այս կէտը չբացատրուեր, շատերը իրաւամբ պիտի կարծէին, Տ. Լ. Մկրտչեանի խօսքերուն հաւատարմով բարեմտաբար, թէ ինչպիսիսն ազգային շահուց և բարեգործութեան խորանին գոհած վաւերական «սուրբ ազգային»ներն յիշեալ զոյգ մը անձնեք եղած են:

Կանոնագրի մասին Տ. Լ. Մկրտչեանի գրածներն կը հասկցուի:

Ա. — Թէ՛ «հակաթաղականներու» գործն էր անոր խմբագրութիւնը: Իրողութիւնը այն է որ զայն խմբագրող Յանձնախմբին հիկնց անդամներն երբեք կը կազմէին Տնօրէն Տր. Մխար ժամկոչեան, Լեւոն Պրեպլեան և Յովսէփ Չոլոբճեան, փոքրամասնութիւնը միայն ըլլալով մնացեալ երկուքը Տ. Գառնիկ Չոլոբճեան և եւս, յայտնի «հակաթաղականներն»:

Բ. — Թէ՛ ժողովին «հակաթաղականներն» անդամներն միայն ընդունուած էր այն: — Մինչդեռ յիշեալ կանոնագրին յօդուած առ յօդուած քննութեան և վաւերացման մասնակցած են Տնօրէն Լ. Մկրտչեան, Տր. Մխար ժամկոչեան, Կարապետ ժամկոչեան, Պերճ Օհանեան, Կոստան Օհանեան, կն. («թաղականներն» սպայակոչուել), և յապացոյց բաժին իրենց ստորագրութիւններն ալ գրած անոր ընտրելի վրայ, խառնուց ու իցէ վերապահութեան կամ ամենափոքր գիտողութեան, հետեւեալ արձանագրութեամբ, որուն շարադրութիւնն և գիրը (աւելորդ մանրամասնութիւն) նոյն ինքն Տ. Լ. Մկրտչեանի հարազատ ձեռքէն կ'ըլլայ, և որ ահաւասիկ.

«Այն կանոնագիրը եօթը ստորագրութիւններով ամբողջապէս ընդունուեցաւ Ընդհանուր ժողովոյ կողմէ իր «9/21 յունուար 1898» նիստին մէջ»:

Յ(Ստորագրութիւն)

Գ. — Թէ՛ «Յիշեալ կանոնագիրը՝ որով Աղբ. ըն- « կերութիւնը անկախ սարմին կը հանդիսանար, ինչ որ « իրենց (հակաթաղականեանց) բաղձանքն էր արդէն » « և զոր ասոնք խմբագրած էին » ինչպէս որ իրենց հաճոյ էր », թաղական խորհուրդը յօժարած էր « աչքերը զոց վաւերացունել », « առանց ընդդիմութեան »:

— Տ. Մկրտչեանի այս և նոյնիմաստ խօսքերը, նախորդ և յաջորդ խորհրդածութիւններովը զօրեղապէս հաստատուած՝ որոշ կը նշանակեն թէ թաղական խորհուրդը սկզբամբ յիշեալ կանոնագրի՝ ոգոյն հակառակ ըլլալով՝ և ոչ իսկ քննութեան ենթարկած էր զայն, և անտարբեր կերպով մը և առանց բացարձակ համոզման անոր վաւերացման նիւթական գործողութիւնը կատարած էր, միայն մէկ փոփոք մը ունենալով, այն է՝ « աղբատններուն բարեբը »: Տ. Լ. Մկրտչեան, հակառակ իւր քաջամտ ռազմարտի՝ այս պարագային մէջ ալ կը մտնայ իւր իսկ շարագրութեամբ և գրով յիշեալ կանոնագրին մէկ պաշտօնական բնագրին վրայ գրոշմած պարբերութիւնն որ է.

Թաղ. Խորհուրդու քննելով Աղբ. Ընկերութեան ներկայ կանոնագիրը, Ընկերութեան շահերուն համաձայն կը գտնէ զայն ու կը վաւերացնէ ի պարս ու պարսզան գործադրութիւն:

Ի Գիմաց Թաղ. Խորհրդոյ փոխ. Ատենապետ

(Ստորագր.) Հ. ԷՔԻՉԼԻՐ

Աղբատնագրիս, 21/4 Մարտ 1898

Տ. Լ. Մկրտչեան կը գրէ թէ հրաժարական տուած Տնօրէն ժողովոյ հինգ անդամներու տեղ « կատարուած « ընտրութեանց պահուն, հակաքաղաքական խումբ. « ըր, կամ Տիար Յովհաննէս Ծորհրդեանի առաքեալ- « ները բացարձակ մեծամասնութիւն շահելու համար « երկու միջոցի դիմեցին: Նախ, այնպիսի անձեր որոնք նախապէս անգամ չէին Աղբ. ընկերութեան՝ ժողովին « գումարման օրը ժողովատեղին բերին, զանոնք անգամ « արձանագրել տուին հինգ զահեկանի վճարմամբ և « քաւարկելու իրաւունք տուին անոնց:

« Եւ, երկրորդ բացակայ անդամներու կողմէ փո- « խանորդագրեր բերել տուին իրենց բարեկամներուն ա- « նունին, այնպէս որ մէկ անձ կարողացաւ ընտ- « րութեանց պահուն իր փոքիս զայս, որիչ միմիջեւ « եօրր անձի անունով ջուէ տալ. այս կերպով, փո- « խանորդագիր ունեցող 2—3 անձ կարող կ'ըլլային « ընտրութեանց քացարձակ տեղը ըլլալ: Այս սխա- « թեմիս շնորհիւն է որ իրենք քաղաքին և քաղաքը « իրենց անձանցով կարգ մը անձեր Տնօրէն ժողովի ան- « դամ ընտրուեցան:

— Խնդրոյ նիւթ եղած նիստը պէտք է եղած ըլլայ կամ 15 Յունիսարի (1899), — Նիստ, 2. — որուն օրակարգի խնդիրներուն մէջ կը գտնուէր, « Նիստատուած հրաժարականաց Տնօրէն խորհրդոյ հինգ անդամոց », և կամ յաջորդը, Նիստ Է. 17/29 Յունիսար 1899թ, որուն մէջ տեղի ունեցան յիշեալ ընտրութիւնը,

Ես կ'ենթադրեմ թէ երկուքը միասին ակնարկուած են Տ. Լ. Մկրտչեանի վերոյիշեալ խօսքերուն մէջ:

Արդ, դարձեալ իրեն՝ Տ. Մկրտչեանին կը թո- ղում դատել իր իսկ վկայութեանց արժէքը որոց համար չլրագրել պնդելէ որ բացարձակ և միակ ճշմարտութիւնն են.

Ընկերութեան պաշտօնական արձանագրութիւնը ցցուցին թէ 2. նստին մէջ 27 անդամք անձամբ ներկայ էին, և փոխանորդեաց թիւն էր միայն 7ը:

Այս 7 թիւը կերպով մը կը նմանի Տ. Լ. Մկրտչեանի յիշած 7 երուն, բայց տեսնենք թէ նոյն իսկ այս միակ ճշմարտ 7ը ամբողջապէս « հակաթաղականեան » թիւ մըն է թէ խառն ընդ « թաղականեանի »: Յայտնի թաղականեան Տ. Գեորգ Իփեքեան ինչ օգնութեան կողմէ իր ստորագրութեամբը, որուն վրայ գրուած է.

« 3/15/1/99.— Այս օրուն ժողովոյ նիստին մէջ « անունելիք որոշմանց առթիւ փոխանորդ կը կարգեմ իմ կողմանէ Պ. Յակոբ Փափազեանը:

(Ստորագր.) ԻՓԷՔԵԱՆ

Իսկ ինչ որ աւելի կարեւոր է և Տ. Մկրտչեանի յառաջ բերած հաստատութեանց գէմ՝ գէթ իրեն համար աւելի արժանահատ վկայութիւն մը պիտի ըլլայ անշուշտ, հետեւեալ վկայութիւնն է որ նոյն իսկ իրն Տ. Մկրտչեանինն է, և որ ահաւաստի ճիշտ ինչպէս որ գրուած է.

« Տիար Փոխ-Ատենապետ Մայր-Դիւանի Աղբ. ընկերութեան, Աստ.

« Անձնական գործերու ստիպմամբ անմիջապէս մեկնելու հարկադրուած ըլլալով, ընտրական գործողութիւններու մէջ իմ ձայնս Տիար Դ. Ատրուսիին կուտամ:

Մնամ յարգանք (Ստորագր.) ԼԵՒՈՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ

Կ'ընդօրինակեմ նաեւ աստ բառ առ բառ նմանօրինակ փոխանորդագիր մ'ենս որ նախորդներուն նման՝ Տ. Մկրտչեանի (այլ ո՛չ իմ և « առաքեալներուս », քաւարկելով) բարեկամներէն միոյն « անունին » է.

« Տիար Ատենապետ Աղբ. Ընդհ. Ժողովոյ, « Ստիպողական պատճառաւ պարտաւորած եմ մեկնելու, փոխանորդ կարգելով իմ կողմանէ Տիար Պերճ « Օհանեանը. ընտրողական քուէարկութեան միջոցին իմ « ձայնս իրեն տալով:

Աղբ. 15/1/99) Մնամ յարգանք (Ստորագր.) Լ. ՊԵՐՋՕՀԱՆԵԱՆ

Գալով 17/29 Յունիսարի Է. նստին, որուն յետաւ ձուլեցաւ ընտրութիւն յաջորդաց յիշեալ հինգ հրաժարելոց որոց հրաժարականաց ընդունելութեան գործողութիւնը միայն կատարուեցաւ նախորդին մէջ, այս անգամ անձամբ ներկայից թիւն 24, բայց փոխանորդագրոց թիւն էր 14, (երկու անգամ եօթը), որոց մէջ մասնաւոր ու շարժութեան արժանի է՝ (կը վախեամ որ ընթերցողներս, չպիտի կարենայիս հաւատարմ եթէ պարզ յիշատակութեամբ մը միայն բաւականանայի) փոխանորդագիր մը որ կը կրէ դարձեալ նոյն ինքն Տ. Լ. Մկրտչեանի ստորագրութիւնը: Ահաւաստի այս վաւերագրին ալ կէտ առ կէտ ընդօրինակութիւնը, որ անհրաժեշտ ապացոյցն է եթէ ոչ Տ. Մկրտչեանի իրեն բացարձակ ճշմարտութիւն հաստատածին, գէթ ճիշտ անոր հակառակին: Բնագրեր ծայրէ ծայր իւր գրովը գրուած է:

« Աղբատնագրիս, 28 Յունիսար 1899

« Մեծապատիւ Տիար Ատենապետ « Մայր-Դիւանի Աղբ. ընկերութեան, « Աստ.

« Վաղուան Ընդհ. ժողովոյ նիստին բանաւոր պատ- « ճառաւ բացակայ գտնուելով՝ Գործադիր ժողովոյ նո- « րոց ընտրութեան համար իմ ձայնս կուտամ Տիար « Գառնիկ Սալմաստեանի:

« Յարգանք մնամ

(Ստորագր. ԼԵՒՈՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ

Նոյն նստին համար դարձեալ վերոյիշեալ անձին, Տ. Սալմաստեանի (որ անշուշտ « հակաթաղականեան » տարրին չէր վերաբերել) փոխանորդութիւն տրուած էր Տ. Միհրան Պէրճեանի կողմէ:

Ուրիշ փոխանորդագիր մըն ալ որ հրաշալի զուգադիպութեամբ մը վերինը կը յիշեցնէ և որ ստորագրութեանը գրեմ թոյրոյիս սարքեր գրով մը գրուած է, հետեւեան է:

« Աղբատնագրիս, 28 Յունիսար 1899

« Մեծապատիւ Տիար Ատենապետ

« Մայր-Դիւանի Աղբ. ընկերութեան, Աստ.

« Վաղուան Ընդհ. ժողովոյ նիստին բանաւոր « պատճառաւ բացակայ գտնուելով՝ Գործադիր ժողովոյ « նորոց ընտրութեան համար իմ ձայնս կուտամ Տիար « Լևոն Պէրճեանի:

Մնամ յարգանք

(Ստորագր.) ՏՕՐ. ՅՈՒՅՈՐ ԹԵՒՓԻԼԷ

Այս առթիւ յատուկ յիշատակութեան արժանի է նաեւ օտ իրողութիւնը թէ թաղական խորհրդոյ պիտաւոր անդամներէն Տ. Հայկ Էքեղէր, փոխ-Ատենապետ, և Տ. Հ. Մուրթաքեան, Ատենապետ, եւ փոխանորդագրեր ղրկած էին միեւնոյն ժողովին:

Առաջինը Տ. Լևոն Մկրտչեանի ծանօթ շարագրութեամբ եւ իւր սեփական գրով, այսպէս.

Աղբատնագրիս 28 Յունիսար 1899

« Մեծ. Տիար Ատենապետ,

« Աղբատնագրիս ընկերութեան

« Մայր-Դիւանի, Աստ.

« Վաղուան Ընդհ. ժողովոյ նիստին բացակայ գրու- « նուելուս պատճառաւ՝ իմ ձայնս կուտամ Տիար Աղբ. « Թան Ճեղհաճեանի:

Մնամ յարգանք

(Ստորագր.) Հ. ԷՔԻՉԼԻՐ

Երկրորդը, ամբողջապէս Տ. Յ. Մուրթաքեանի գրով և այսպէս շարագրուած.

« Մեծապատիւ Տիար Ատենապետ

« Աղբատնագրիս ընկերութեան

« Ընդհանուր Ժողովին.

« Անձամբ չկարողանալով մասնակցել այս աւուր « Ընդհանուր ժողովի նիստին, այսու կողման յայտարար- « րել որ իմ քուէն յանձնած եմ Պրն. Էտ. Թուրշուճեան- նին:

Յարգանք (Ստորագր.) ՅՈՒՅՈՐ ԹԵՒՓԻԼԷ

18 1/29 99 (Աստ):

Կասկած չկայ որ վերոյիշեալ փոխանորդագրերը չեն կրնար ըլլալ անոնք զորս, ըստ Տ. Լ. Մկրտչեանի, « հակաթաղականեան խումբ » կամ « Տիար Յովհաննէս Ծորհրդեանի առաքեալներ » բերել տուած էին:

Բիշ մնաց պիտի մտնայի թէ թաղական խորհրդոյ անկամ մըն էր նաեւ Տ. Աղբատն Ճեղհաճեան, որ բաց ի այն փոխանորդութիւնէն զոր իրեն տուած էր նոյն խորհրդոյ Փոխ-Ատենապետը, կը ներկայացունէր նաեւ ուրիշ չորս անդամներ, որք ինչպէս ուրիշներն՝ ազատ էին անշուշտ ապու իրենց քուէն որու որ ուզէին: Այսպէս սերեմ, բացի վերոյիշեալ հինգ փոխանորդագրերէն (ամենն ալ անաւարակոյս ի նպատ « թաղականեան խումբ »-ին), պարտիմ նաեւ հաշուի գնել թաղական խորհրդոյ այս եր- բորդ կարեւոր անդամին յանձնուած չորս քուէները՝ Տիարը Գրիգոր Ճեղհաճեանի, Ստեփան Ճեղհաճեանի, Յակոբ Մ. Յակոբեանի և Միքայիլ Յակոբեանի կողմէ: Գումար « թաղականեան » փոխանորդագրութեանց (9) ինն:

Թաղական խորհրդոյ վերոյիշեալ երեք անդամոց վրէ ոչ միայն անհեթեթ կասկած մը այլ ճշմարտ նախատիք մը պիտի ըլլար (\*) ենթադրեն իսկ թէ նոքա իրենց ձայ- ները ղրկած ըլլան որպէս զի անոնցմով « հակաթաղա- կանեան խումբ »-ին մեծամասնութիւնն ապահովուի:

Փոխանորդագրոց 14 ընդհանուր թիւին վրայ Յմիայն կը մնայ, որք « թաղականեան խումբ »-ի հարսացելուց ներքէ կամ նոյն իսկ թաղական խորհրդոյ անդամներէ ստորագրուած չըլլալուն համար, կը շնորհեմ Տ. Լ. Մկրտչեանի նկատել զայնս իբրեւ « հակաթաղականեան » քուէներ. կուտամ այս հինգ ստորագրոց անուններն որպէս զի « թաղա- կանեան » ապահով ըլլան թէ իրենց « Խումբ »-ի անդամներ տոնեանցում չեն « հակաթաղականեաններու » կողմէ: Ահաւաստի, Տիարը Բարսեղ Իոպէճեան, Պրն. Գուրա- կան Գրիգոր Մինասեան, Գառնիկ Չպուրճեան, և Եր- ուանդ Տէրվիշեան:

Ինչպէս խոստացայ՝ հարկ եղած դատաստանը ես անձամբ չպիտի ընեմ վերոյիշեալ ապացոյցներուն միջո- ցաւ, այլ միամտաբար՝ ընթերցողաց և նոյն իսկ Տ. Լ. Մկրտչեանին պիտի թողում զայն ընել և վճել թէ ո՞ր չափ ճիշտ են իր հետեւեալ խօսքերը թէ՛ « Պ. Ծորհրդե- կան սա սիրուն միամտութիւնն ալ ունի որ ինչ որ ներք կը մտածէ՝ անպայման կերպով շիտակ է. իրմէ և իրեն- ներէն զորոս ամեն մարդ սխալ է, ստրտ է, անպարկեշտ է, անիրաւ է »:

Արդարեւ, « Աղբատնագրիս աղգային գործեր »-ու պատմարանին ինչ վերագրած յիշեալ միամտութիւնը չիմ կարող ընել թէ բողոքովին չունեմ այնպիսի պարա- զայից մէջ յորս ապացոյցներս նոյն իսկ նուազ զօրաւոր և նուազ բաղձաթիւ ըլլան քան մինչև այստեղ յառաջ բերուածները. բայց թող ներք ինչ Տ. Լ. Մկրտչեան գիտել տալ իրեն թէ քիչ մը շատ բացարձակ և շատ ընդհանուր ձեւ մը տուած է իր գիտարկութեան, որուն համար համարձակելով հետեւեալ ընել այս փոքրիկ վե- րապահութիւնը՝ կը խոստովանիմ թէ անկարող եմ զայն հիմնովին հերքել:

3

Տ. Լ. Մկրտչեան կը գրէ, « Որպէս զի մեր գրած- ներուն մէջ մտիմ կէտ չի մնայ, յայտնենք անմիջապէս թէ առանց նախապէս ժողովին անկամ եղած ըլլալու, գումարման օրն իսկ ժողովատեղին բերուած վերոյիշեալ երկու անձերն էին՝ Տիարը Յարութիւն Աղբատն և Մի- քայիլ Կիրճեան »:

« Փախուտի ճամբայ չի ձգելու համար, սակայն, նախա- հողութիւն ունեցած եմ կանխաւ վերոյիշեալ երկու աղ- զայից գրուող վկայութիւններն անուն որոնք իմ իրմ պահուած եմ . . . »:

(\*) Մանաւանդ իրենց ստորագրուած պաշտօնական կողմէ, որ միանգամայն նոյն ինքն թաղականներէ աւելի « թա- փականեան հանդիսանալու քաջութիւնն ունի:

—Ինչու էր բոլոր կը պահէ Տ. Լ. Մկրտչեան աշխարհային թանկագին ապացոյցներ ի նպաստ իր այս հաստատութեանց: Արդեօ՞ք կը վախնայ որ մի գուցէ ուրիշներ տարբեր կերպով մեկնեն զայնս քան ինչպէս ինք հարկ կը տեսնէ ընել:

Նախ և առաջ բնեմ որ նոյն իսկ եթէ Տ. Մկրտչեանի այս ապացոյցները ծառայէին իւր դասին, ընթացողք՝ որ հիմայ տեղեակ են խնդրոյ նիւթ եղած ժողովին անձամբ թէ փոխանորդագրելով ներկայութեանց, ծիծաղելի պիտի գտնեն ինչ հետ Տ. Պատմաբանին միամտութիւնն որով աշխարհի մեծ ճիգեր կը թափէ երկու անձանց ապօրինի ներկայութիւնը ապացուցանելու, երբ ինքնայայտ է թէ այդ երկու անձանց ներկայութիւնը կամ բացակայութիւնը բացարձակապէս աննշան իրողութիւն մըն էր ժողովոյ մեծամասնութեան սասին:

Այսու հանդերձ, որպէս զի չկարծուի թէ Տ. Մկրտչեան յիշեալ երկու անձանց համար տեղի ունեցած բլլան այն զեպքերը զորո իրբն «հակաթաղականեան խումբ»ին կողմէ գործածուած ընդհանուր միջոց մը, յառաջ կը բերէ Տ. Լ. Մկրտչեան՝ գրաւոր վկայութիւններու վրայ կոխելով, հարցունենք նոյն իսկ Տ. Յ. Աբիտարի և Տ. Մ. Կիւրճեանի թէ իրենք ինչ կը մտածեն իրենց վերաբերած վկայութեանց վրայ:

Երկրորդը՝ անձնական շատ յարգելի պատճառներ ունի եղեր լուծուի պահելու, բայց այս չարգիլքը ինչ պահանջելէ Տ. Մկրտչեանին՝ լրագրի մը միջոցաւ հրատարակուի «այն գրաւոր վկայութեան գոր նախահոգութիւն ունեցեր է կանխաւ իրմէ անհելու, և զոր բոլոր պահած ունի»:

Գալով առաջինն՝ անոր վկայութիւնն ալ կը պահանջեմ Տ. Մկրտչեանին՝ հրատարակել, և ապացուցանել թէ «հակաթաղականեան խումբը կամ իմ առաջնական ժողովատեղին բերին յիշեալ երկու անձերը, զանոնք անգամ արձանագրել տուին հինգ զահեկանի վճարմամբ և քուէարկելու իրաւունք տուին անոնց»:

Տ. Յ. Աբիտար, անձնական ո՞նէ արգելք մը չունենալով պատասխանելու հարցումի մը զոր հետաքրքրութիւնն ստիպեց զիս ուղղել իրեն, ի մէջ այլոց հետեւեալը կը գրէ ինչ Տ. Մկրտչեանի՝ հրատարակութեանը նկատմամբ.

«... Լ. Մ. չարաչար կերպով գործածած է իմ անունս իր յօդուածին մէջ (որուն համար հրապարակաւ բացատրութիւն պիտի պահանջեմ իրմէ), և այսպէս կերպով «... կը զուրթէ, երբ կը յայտարարէ թէ ես իրեն նամակ գրած եմ իր ըսածը հաստատող իր խելքովը կը կարծէ թէ այդ զրպարտութեան առջեւ լուս պիտի կենամ. . . .»

«Լ. Մ. ի արարքը չափազանց կ'այլայլէ իր ուղղամտութեան վրայ ունեցած հասարգս. . . .»

Կրկին կը խնդրեմ Տ. Լ. Մկրտչեանին ի սեր ճշմարտութեան հրատարակել թէ Տ. Յ. Աբիտարի և թէ Տ. Մ. Կիւրճեանի կողմէ իրեն ուղղուած նամակներն, որպէս զի հանրութիւնը կարող ըլլայ ինքն ալ գտնել անոնց պարունակութեան արժէքը, քանի որ Տ. Մկրտչեանի խօսքերը վերցուցած են այլևս անոնց վրայէն ո՞նէ և երբ անհատական կամ գաղտնի գրութեան մը հանգամանքը:

Այս խնդրոյ մէջ կէտ մը դեռ կայ որ ինչ անմեկնելի կը մնայ Տ. Մկրտչեանի կ'ըսէ թէ «Այս զեպքերուն ճշգրիտ նկարագրութիւնը շատ անուշ չպիտի հնչէ անշուշտ Եւրոպայի Ազգայնագրի թղթակցի ականջին և գուցէ չուզէ եղելութիւնը խոստովանիլ: Փախուստի ճամբայ չի ձգելու համար, սակայն, նախահոգութիւն ունեցած եմ կանխաւ վերոյիշեալ իրերու ազգայնոց գրաւոր վկայութիւններն անել որոնք իմ քովս պահուած են...»

Որո՞ւ փախուստի ճամբայ չձգելու համար արդեօք Տ. Լ. Մկրտչեան յիշեալ նախահոգութիւնն ունեցած է. Եւրոպայի թղթակցին թէ վերոյիշեալ երկու ազգայնոց»:

Եթէ առաջինն է, կը զարմանամ թէ ինչու Տ. Մկրտչեան կը վախնայ որ իր «ճշգրիտ նկարագրութիւնը» վտանգի ենթարկուի իր իսկ վկայիցը կողմէ:

Եթէ փախուստի երկիւրը Եւրոպայի թղթակցէն չէ, ապա ուրեմն Տ. Լ. Մկրտչեան յաջողած է «վերջ յիշեալ երկու ազգայնիներն» ընդունիլ վկայութիւններ զայնս իրենց ղեմ գործածելու համար: Արդ, յիշեալ երկու անձերէն ո՞րն է որ կարենայ բռնադատուած բլլալ ակամայ և ինքն իրեն հակառակ վկայութիւն մը ստորագրելու և զայն Տ. Լ. Մկրտչեանի յանձնելու համար ի գործածութիւն:

Եթէ ներքի ըլլար այսպիսի ենթադրութիւն մը, այդ պիտի նշանակէր անշուշտ հետեւեալ երկու բաներէն մին կամ միւրը: Կամ այն է որ յիշեալ վկայութիւնները չեն ինչպէս որ կը հաստատէ Տ. Մկրտչեան, կամ այն է որ բնութեամբ և սպանալեօք ընդունուած վկայութիւններ են անոնք:

Լուսաբանութիւնն մը անհրաժեշտ է այս մասին Տ. Լ. Մկրտչեանի կողմէ, եթէ կը փափաքէ կամ կարող է ապացուցանել իր իսկ վկայութիւնը:

4

Տ. Լ. Մկրտչեան կը բողոքէ զեղբիւր սեռէ անգամայն Բարեգործական ընկերութեան մասնակցելուն դէմ, և մասնաւոր անոնց իրաւունքին ղեմ ժողովներու մասնակցելու մասին:

Այս «անորակելի» առարկութեան թող պատասխանեն ուղիղ բանականութիւնը, և Ազգ. Բար. Ընկերութեան Կանոնագրին երկրորդ յօդուածին առաջին պարբերութիւնը և ինքնորոգ յօդուածը:

—Յօդ. 2.—(Ընկերութիւնը կը կազմուի պարզ և պատուոյ անդամներէ, առանց սեռի խտրութեան:

—Յօդ. 9.—(Ընդհանուր ժողովը կը կազմուի Ընկերութեան անդամներէ և ներկայացուցիչներէ որք կանոնադրապէս տարին երկու անգամ, այսինքն Յունիս և Դեկտեմբեր ամսոց մէջ, ի ժողով կը գումարին ընտրական գործողութիւնները կատարելու և Տնօրէն ժողովոյ տեղեկագիր և հաշուեցոյցները քննելով վաւերացունելու կը...»

5

Ընկերութեան «երկրորդ շրջան»ի պատմութիւնն աւարտելու առթիւ, Տ. Լ. Մկրտչեան կ'ըսէ թէ «Իրենց փափաքը են Եղբ. որ Տ. Չարեհ Սըվազըն կոչուի Ընդհ. ժողով Դիւանի անդամութեան պաշտօնին, բայց, կը յաւելու, քանի որ անիկա իրենց բարեկամ նկատուած էր, Պ. Շնորհքեանի առաջադիւնըրը անոր սեղ ընտրեցին Աստուր Էֆ. Շերտանեանը»:

—Շատ տղայական դիտողութիւն մը:

Եթէ ընտրուածը Տ. Սըվազըն ըլլար, միշտ թաղականեան թաղական խորհրդը քարտուղարը, միշտ ընկերութեան գլխուն գանգատներ, բողոքներ թափող ընկերը, ճշտ միեւնոյն տրամաբանութեամբ, իրաւունք պիտի գտնէր գանգատելու և բողոքելու թէ «թաղականեան» փափաքը ունէին ընտրելու այս ինչ կամ այն ինչ անձը որ Տ. Սըվազընն ալ աւելի կարող էր նիւթապէս օգտակար ըլլալ ընկերութեան կը...»:

Բայց ինչո՞րն այն է թէ ինչ որ ալ ըլլան ժողովոյ մը անգամայն մէկ մասին փափաքները, մեծամասնութեան քուէով տրուած որոշումները կը մեան վճռական և պատկառելի՝ անխտիր ամէն անգամայն համար:

Յոյժ կը սխալի Տ. Լ. Մկրտչեան Տ. Աստուր Շերտանեանի ընտրութեան մէջ ապացոյց մը տեսնելով թէ «հակաթաղականեան» հակակրօնութիւն մը ունէին Տ. Սըվազընի ղեմ, զայն «թաղականեան» բարեկամ նկատելով: Ինչպէս որ Տ. Մկրտչեան ինքն իսկ կ'ըզգացունէ, Տ. Չարեհ Սըվազըն հետեւ էր բարեկամական սերտ կապակցութիւններ ունենալէ Տ. Լ. Մկրտչեանի հետ կամ ասոր կուսակիցներուն հետ: Տ. Սըվազըն ինքն իսկ ինչ անուած է այս մասին այնպիսի զօրեղ ապացուցումներ որոց հրապարակաւ յիշատակութիւնը կը խնայեմ «թաղականեան»ներուն:

Այս առթիւ սա ալ ըսեմ թէ Տ. Աստուր Շերտանեանի ընտրութիւնը տեղի ունեցաւ 30 Յուլիս 1899ի թիւր Ընդհանուր ժողովին մէջ, ներկայ անգամայն ամբողջ քուէներով պակաս մէկ:

Ինչպէս կարելի է ուրեմն հաւատալ թէ Տ. Մկրտչեան և իւր բարեկամները իրօք փափաքող էին Տ. Չարեհ Սըվազըն ընտրելու այս անգամ:

Տ. Մկրտչեան կ'ստիպէ զիս ակամայ՝ փոքրիկ շեղում մը ընել աստ, յիշեցունելով ինչ նոյն տարւոյ Ապրիլ ամսոյն մէջ տեղի ունեցած թաղական խորհրդոյ ընտրութեանց պահուն իւր և ընկերակցացը կողմէ նոյն Տ. Չարեհ Սըվազընի խաղաղաւոր խաղը զոր այս վերջինս ինչ պատմած է ժամանակին:

Այս ընտրութիւնը, որք թաղական խորհրդոյ քարտուղարին և ասոր բարեկամաց կամ հետեւակաց (ամենեքէն եղբարք ի «Չնչակ» և ի «Մարտ») արտաքոյ կարգի գործունէութեան և ընտրական զանազան հնարքներուն ազատ ասպարէզ տուին (ինչպէս որ ամեն

Ազգայնագրիցի բաւ կը յիշէ), և որք արգար է ըսել՝ գրեթէ ասոնց շնորհիւ միայն ի գրուի երան, նպաստաւոր չեղան Տ. Սըվազըն, թէպէտև վսեմ. Պօղոս փաշա ինքն իսկ իր որոշ փափաքը յայտնած էր զայն ընտրուած տեսնելու, և յիշեալ ընտրական ընկերակցութիւնն ալ իւր խոստումը տուած՝ այս ընտրութիւնը յաջողցնելու:

Համեմատական քուէարկութեան առթիւ, առաջին քուէահաւարին աննշան արդիւնքը փոխարինելու նորոգ ապահովութիւններ տրուեցան, և յիշեալ՝ այս անգամ փոխանակ 19 քուէի 43 քուէ շահեցուցին անոր, հակառակ ընտրողաց նուազագոյն թուով մասնակցութեան, (ինչպէս ուրիշի մ'ալ՝ կանխաւ և ուղղակի Տ. Մկրտչեանէ եղած խոստման համաձայն, 80 և այսչափ քուէ):

Բայց այս թիւը ճիշտ այնչափ եղաւ որչափ պէտք էր տրուած խոստման յարգուած ըլլալը ցուցնելու բայց ո՞չ թէ ընտրութիւնն ապահովելու համար, զի «Տեաք Մկրտչեան և ընկերութիւն» անանուն ընկերութիւնը կը վախնար թէ Տ. Սըվազըն ամէն առթի մէջ և անպատճառ համակերպող սարք մը չպիտի ըլլար թաղական խորհուրդէն զուրս տրուած որոշմանց:

Այս քուէարկութեանց միջոցին յիշեալ անանուն ընկերակցութեան կողմէ տեղի ունեցած ապօրինաւորութեանց կը. մասին բողոքողներն եղան նոյն ինքն ընտրողական ժողովոյ անդամներ, և մասնաւոր նշանակութեան արժանի պարագայ մ'է թէ այս Ընտրողական ժողովը ո՞նէ իր տեղեկագիր մը ստորագրած չէ մինչև այսօր իր կատարած պաշտօնին նկատմամբ:

Այս միջանկեալ յիշատակութեամբ է որ պիտի բացատրուի այն փութանութիւնը որով Տ. Մկրտչեան առիթ կը փնտռէ մոռցունելու Տ. Սըվազընի յիշեալ զեպքերուն խիստ անախորժ տպաւորութիւնը, և օգուտ բաղելով Բարեգործական ընկերութեան ամենապարզ ընտրութեան մը խնդրէ՝ ճիգեր կը թափէ հրապարակային տեսակ մը գոհացում տալու անոր, այսպէս զուցէ այսուհետև արժանանալու համար անոր բարեկամութեան, չմտածելով սակայն թէ ասով աւելի վերաւարանք մ'ըրած կըլլայ Տ. Չարեհ Սըվազըն անձնասիրութեան քան թէ մեծարանք մը:

6

Տ. Լ. Մկրտչեան կ'ըսէ թէ «Իրենց («հակաթաղականեան» Տնօրէն ժողովին) ամբողջ գործունէութեամբ հազիւ կը յաջողէին ձեռք բերել ամսական քանի մը հարիւր դրուշի ճշմոք հասոյթ մը, որոնց անմեկնի մատակարարութեան համար գիշերներ կը բուցուէր մեր հիշուանդ թարեկաւ Տիար Շնորհքեանը»:

—Այս խօսքերուն նիւթական արժէքին նկատմամբ միայն պատասխանելով, կը փութամ հաստատել թէ —1899 Յունիս 30ին զագարեալ վեցամեայ հաշուոց արդիւնքն եղած է.

Հասոյթք՝ Եգ. Ոսկի 337, 42, 3/10, —Իսկ 1899 Դեկտ. 31/12

Յունիս 1900ին զագարեալ տարեկան հաշուոց արդիւնքն եղած է.

Հասոյթք՝ Եգ. Ոսկի 593, 19, 9/10,

սոսնց հաշուելու նոյն Յունիս 24ին տրուած թատերական երեկոյթի մօտ 270 ոսկիոյ զուտ հասոյթը որուն 70 ոսկին միայն կը գտնուի յիշեալ գումարին մէջ:

Նախորդ վարչութեան, այսինքն 1898ի ամբողջ տարեկան հասոյթն եղած էր միայն Եգ. Ոսկի 313, 38, 7/10 2/10

7

Տ. Լ. Մկրտչեան կը գրէ «... Այս հիւանդոտ միամտութեան արդիւնքն էր այն անիմաստ ձգտումը որ վերջերս դոյնացաւ թաղ. խորհուրդին և Ազգ. ընկերութեան միջեւ: Չգուտմ որ քիչ մնաց Ազգ. Ընկերութեան գոյութիւնն իսկ վտանգի ենթարկուի: Ահա այդ ատեն լուրջ մտածեցին թէ Ազգ. ընկերութիւնը չէր կրնար յաւերժապէս հիւանդանոցի ձեռքն յանձնուիլ և դարման մը խորհեցան այս վիճակին»:

«Պ. Շնորհքեան այս առթիւ պատրաստած էր 24 երեսն բաղկացեալ տեղեկագիր մը որով կը հարուածէր իրարու յաջորդող երեք թաղ. խորհուրդները և կը նախատէր ընկերութեան անդամներէն կէսը»:

Բոլոր ակնկալութեանց հակառակ, բայց բռնադատուած ըլլալով անպատասխանի կէտ մը չթողու Տ. Մը կըրտիչեանի պատմութեանցը մէջ, չափազանց երկարեցաւ գրութիւնս: Այս պատճառաւ ստիպուած եմ յաջորդ առթի մը թողուլ մասնաւոր տեսութիւն մը թաղական խորհրդոյ հետ առնչութիւն ունեցող խնդրոց վրայ, որք «Տեղական ազգային գործերու բնագիտութիւն» վերնագրով Տ. Մկրտիչեանի աշխատասիրութեան երկրորդ մասին կը վերաբերին առաւելապէս:

Այսպէս ուրեմն, Ընկերութեան յատուկ խնդրոց սահմանէն դուրս չըլլելու հարկին մէջ գտնուելով, առ այժմ, վերի արտագրութեան առաջին պարբերութեանն սա միայն կը քաղեմ թէ՛ թաղական խորհրդոյ և Աղք. Ընկերութեան միջև գտնուած յարաբերութիւնը պատճառ եղեր են վայրկեան մը ընկերութեան գոյութիւնն իսկ վտանգի ենթարկելու, և թէ թաղական խորհուրդն է որ, լուրջ մտածելով, միջոցներ խորհրդ և Ընկերութիւնը այլոց ձեռքը յանձնելու համար:

Գալով երկրորդ պարբերութեան՝ մեր Տնօրէն Ժուղոյն, ըստ Կանոնագրի պարտաստուած, 1899ի տարեկան ընդհանուր տեղեկագիրը 14 միջակ էջերէ բաղկացեալ է, և անոր մէկ պատճէնը ճակատին թաղ. խորհրդոյ մօտ կը գտնուի:

Յիշեալ տեղեկագիրը՝ ներկայացուած հաշուոց հաստից և ծախսոց արդիւնքներուն վրայ և ասոնց յարակից կարեւոր իրողութեանց վրայ տեսութիւն մըն է, որոնք մէջ խնդրէ դուրս ո և իցէ քննադատելի բան մը չի գտնուիր:

Եթէ ըստ Տ. Լ. Մկրտիչեանի յիշեալ տեղեկագիրը թաղական խորհրդոյ դէմ հարուածներու և Ընկերութեան անդամոց կէսին դէմ նախատինքներու հաւաքածոյ մըն է, կ'արտօնուի զինքը հրատարակել անկէ մի քանի քաղուածներ որպէս զի հասարակութիւնն ալ համոզուի թէ զուտ ճշմարտութիւնն է՝ այս մասին ալ Տ. Մկրտիչեանի վկայութիւնը:

Փութամ յաւելու թէ Տ. Լ. Մկրտիչեանի հաւատքը սխալմունքի ենթարկող բանը պէտք է ըլլայ անշուշտ գոյութիւնը Տնօրէն Ժողովոյ կողմէ առ Ընդհանուր Ժողովն ուղղուի բացատրական նամակի մը (նամակ որ տակաւին ձեռքս կը գտնուի, զի Ընդհանուր Ժողովոյ նիստը զիտ տեղի չունեցաւ զայն ալ ընդունելու համար), նկատմամբ ընդհանրապէս բացատրութեան կարօտ խնդիրներու, ընդ որս այնպիսիներու որոց մէջ ըստ Տնօրէն Ժողովոյ համոզման՝ թաղական խորհրդոյ բռնած ընթացքը և ձեռք առած միջոցները մեծապէս դժուարացուցած էին կարօտեցող պետոյից գոհացումը:

Կարծեմ թէ Աղքատներու Բարեգործական Ընկերութեան մը Տնօրէն Ժողովը՝ թաղական խորհրդոյ քարտուղարի մը, և ո՛չ իսկ նոյն ինքն թաղական խորհրդոյ մը համակրութեանն արժանանալու հասար՝ պէտք չէր մասնել թշուառաց դատը, զոր ամէն կերպով պաշտպանել իր սրբազան պարտականութիւնն է:

Անդամոց կէսին դէմ նախատինքներ բռնելով Տ. Լ. Մկրտիչեան կ'իմանայ անշուշտ, իր գրական ոճին զիտակցութեամբ, յիշեալ նամակին մէջ գտնուող ակնարկութիւններն այն փաստակար ժամավաճառութեանց և ապօրինի վարմանց որոնց ստպարէզ եղած էին Ընդհանուր Ժողովոյ նիստերը ո՛չ թէ, բարեբաղդարաբ, անդամոց կիտուն կողմէ, այլ այն հիմայ հանրածանօթ հազիւ մի տասնեակ անձանց կողմէ որոց պաշտօնական առաջնորդն և կուսակցական փաստաբանն եղած է Տ. Լ. Մկրտիչեան և պիտի ըլլայ յաւիտեան, եթէ երբէք ազգային գործերը միշտ այսպէս կարենան շարունակել Աղքատներու մէջ:

Ներկայ գրութեան երկրորդ մասին մէջ շատ աւելի ազդու, միանգամայն տխուր կերպով մը պատկերացած են յիշեալ անձանց արարքները որոց վրայ ընթերցողաց թողած եմ, ըստ սովորութեանս, անաչառ դատաստան ընել և արդար մտնող տալ:

Եթէ Ընդհանուր Ժողովոյ տակը մտնող կարենար ի նպատակ իրենց ըլլայ, Տեղացի Մկրտիչեան և ընկերութիւն այն գերմարդկային ճիգերուն և գատապարտելի ու ամօթալի միջոցներուն պէտք չէին ունենար յաջողելու համար վերջին 23 Մարտի ԺԲ. նիստը դարձունելու ինչ որ ի վերն նկարագրուեցաւ իր կարգին, և արդիւնքը որ տեղի ունենան օրինաւորապէս Օրակարգին մէջ նշանակուած կարևոր պաշտօնագրերու ընթերցումն և ընդունելութիւնն, որք են:

— Տնօրէն Ժողովոյ վերջին (1899) տարեշրջանի տեղեկագիր և հաշուեցոյցներ:

— Բացատրական նամակ Տնօրէն Ժողովոյ, վերջին տարեկան շրջանի գործառնութեանց վրայ:

— Քննիչ Յանձնաժողովոյ տեղեկագիր և վաւերացում հաշուոց:

— 1900—1901 տարեշրջանի հատուկից և ծախսոց ծրագիր, ինչպէս նաև հետեւել ընտրութիւնները:

1. Տնօրէն Ժողովոյ, և

2. Դիւանի Ա. Ատենապետի և Բ. Ատենագրի: «Թաղականեան խումբին կատարած յիշեալ սրբագործութիւնները կ'ապացուցանեն բաւականապէս թէ իրեն համար երեսակային լաւագոյն Տնօրէն Ժողովը, կամ ո և իցէ ազգային հանրային գործի վարչութիւն մը այն է որ ո՛չ կանոնաւոր և օրինաւոր տեղեկագիր, հաշիւներ, ծրագիրներ կը մատուցանէ իւր համարառու մարմնին, և ոչ իր պարտականութիւնները կը կատարէ անձնական նկատմաներէ անկախ կերպով մը, և միմիայն իր պաշտօնը զօղ օրինաց հաւատարիմ և խղճամիտ գործադրութեամբ: Աղքատներու մէջ գոյութիւն ունեցող «Թաղականեան խումբ»-ը այս տիտղոսը իրաւաբ և առանց հակառակութեան գործածելու համար դէ՞. տարբեր սկզբունք մը չէր կարող դրոշմել իր դրօշին վրայ:

Տ

Տ. Լ. Մկրտիչեան կը խոստովանի թէ վերջին Ընդհանուր Ժողովոյ (Նիստ ԺԲ. 23 Մարտ 1900) հրաւիրագրերը Դիւանին կողմէ ցրուելէն յետոյ, «ստացուելուն յաջորդ օրն իսկ», Ասեմ. Տեղացի կարասիտ, Արթին և Մեքայէլ պէյ Բէրեան փափաք յայտնած էին իրենք ալ անդամակցել և առաջին բաժնեմասնակից, մէկ ու կէս երկարական ոսկի ինծի (Տ. Մկրտիչեանին) յանձնած էին Աղք. Ընկերութեան յանձնուելու համար. նոյնպէս ուրիշ ազգայիններ ալ փափաքած էին անդամակցիլ և իրենց անդամակցներն ալ հաստատուած. բնաւ չէր բաւարար (Տ. Լ. Մկրտիչեանն է խօսողը) յայտարարելու թէ մեր փափաքն էր մեզի գաղափարակիցներու քիւր շահցնելը և այս կերպով մեծամասնութիւն շահելով Աղք. Ընկերութիւնը փրկել Եւրոպայի անհասկացիլ խնայելէն:

— Տ. Լ. Մկրտիչեանի այս խօսքերուն ըմբռնումը զիւրացնելու համար, նախ՝ կ'արտագրեմ հոս թաղական խորհրդոյ կողմէ վաւերացեալ Աղքատներու Բարեգործական Ընկերութեան կանոնագրին 12րդ. յօդուածը, որ կ'ըսէ.

Դիւանն, Ընդհանուր Ժողովոյ գումարաւորներու օր առաջ, կ'որոշէ քիւր անդամաց, և իսկին օրակարգը պարտականող հրատարակուի:

Տ. Մկրտիչեան չուզեր որ գտնէ՝ այս պարագային մէջ, ինձմէ ուրիշ մէկը վայելէ օրինաց ամենաճշիշ գործադրութեամբ շարժած ըլլալու պատիւը:

Իբր թէ Բ. Ատենապետ Տ. Ա. Ճէվախիբեան պատրաստուած է եղեր Տ. Մկրտիչեանի նոր գաղափարակցներուն հրաւիրագրեր զրկել, բայց իմ գրած «ո՛չ կարծեմք»-իս առջև ետ կեցեր է իւր դիտաւորութիւնը գործադրելէ:

Տ. Ա. Ճէվախիբեան, ինչպէս ուկցէ ուրիշ խելահաս և պատուաւոր անձնաւորութիւն մը, երբէք չզիջանիր անշուշտ իր ըրած մէկ բանին պատասխանատուութիւնը մերժելու, նոյն իսկ եթէ այդ մասին հետեւած ըլլայ ուրիշ մը դիտաւորութեանը կամ խորհրդին:

Եթէ Տ. Ա. Ճէվախիբեան ներքի չէ գտած կանոնագրին բացորոշ արտադրութեանցը դէմ շարժելով բացառութիւն մը ընել նոյն իսկ վերոյիշեալ անձնաւորութեանց համար, կարծեմ թէ այս կերպով մասնաւոր գովեստից արժանի արտաքոյ կարգի գործ մը չէ ըրած, այլ պարզապէս կանոնագրի 12րդ. յօդուածին հաւատարիմ մնացած է, ինչպէս որ էր իր պարտականութիւնը:

Բայց ինչպէս կը գտնէք այսպիսի ամենապարզ և անմեղ խնդրոյ մէջ ալ Տ. Լ. Մկրտիչեանի սրտմտեալ և վրէժնոյրը զգացմանց բորբոքումը որով «ալ այս անգամ այս կարգի զահատականութեանց վերջ մը դնել»-ու որոշումն առնել կ'ստիպուի, «Թաղականեան խումբ»-ի իւր կուսակցներուն գործակցութեամբ:

Տ. Լ. Մկրտիչեան գոհ չլինար յափշտակելով միայն Դիւանի Ատենապետէն իւր արդատ դատաւորութեան մասնաւոր թէ կէտ առ կէտ կանոնագրին համաձայն մարուած ըլլալու իրաւունքը, այլ վիայնչուղ անարգանք մըն ալ կը շնորհէ անոր, ներկայացուցելով զայն «արտասահմանեան ուրիշ երկրներու հայերուն», իբրև անգիտակից մե-

քենայ մը Տնօրէն Ժողովոյ կամ անոր Ատենապետին բնահանդիցը խաղալիկ:

Այսպիսի տրաստարանութեան մը, ուղղամտութեան մը, բարեկրթութեան մը հրաշալիքները Աղքատներու թաղական խորհուրդներու անձնուրաց, անշահախնդիր, ճշմարտասէր փաստաբանին մէջ միայն կրնան անձնաւորուիլ:

Վերադառնալով մեր քննութեան առարկայ եղող պատմութեանց, տեսնենք թէ տակաւին ինչ ճշմարտութիւններ երևան կը հանէ մեր խորմաստ պատմաբանը: «... և հրաւիրագրերը չիւրիւեցան. և թէ՛ պէյ յերու և թէ՛ ուրիշ նոր անդամներու դրամները մերժուեցան...»

«Պ. Ենօրհեան չէր կրնար հանդուրժիլ որ հակառակ կողմը (թաղականեանք) մեծամասնութիւն շահի և «օրէնք ի ձեռս Առաջնորդաց» ըլլալով իր իշխանութիւնն կ'օգտուէր գործերը ուզած կաղապարին մէջ թափելու:

«Յ) 21 Յունիս 1898ին ի վեր վերակարգեալ Աղք. Բարեգործական Ընկերութիւնը՝ երկու երկար տարիներէ և երկու ամիսներէ յետոյ միայն, ինչպէս կը հաստատուէ Տ. Մկրտիչեան, կը վայելէ «Ասեմ. Տեղացի կարասիտ, Արթին և Մեքայէլ Բէրեան պէյերու և ուրիշ անձերու (ասոնց թիւն անգամ չըսեր, բայց ի մէջ այլոց իմացած եմ թէ քառասունէն պակաս չէր) անդամակցութիւնը», թէպէտ անշուշտ ժամանակին, «Տ. Հայկ Էջեղլէրի թաղական խորհուրդը՝ նկատելով որ անդամակցները գոյացած հասոյթը անբաւական է աղքատաց պէտքերը հոգարու և հասոյթներու նուազութեան պատճառն ալ ընկերութեան կազմալուծեալ վիճակն է՝ որոշեց, թաղեցիներու օժանդակութեամբ, ընկերութիւնը վերստին կազմակերպել և այս նպատակով հրատարակուի յիշեալ կարեղի եղած ինչ չափ շատ քուրով քաղցեցիներու, անդամ տե ո՛չ անդամ»:

Արդե՞ք այս օրուան հարագատ «Թաղականեաններն» այն ատենի այն «հակաթաղականեաններն» էին որ «ամե՞քը մէկէն խօսք մէկ ըրին Աղք. Ընկերութեան դրամ չ'վճարել»:

Ի նկատի ունենալով սա անհերքելի իրողութիւնը թէ Ընկերութեան օգնութեանցը կարօտ թշուառ ազգայնոց թիւը յիշեալ երկու տարիներու ընթացքին մէջ հետզհետէ զգալի կերպով պակասած է, (անոնցմէ անուազն 300ը միայն Ընկերութեան միջոցաւ զանազան տեղեր զրկուած և կարեւոր մաս մըն ալ գէշ աղէկ գործի մը տէր դարձած ըլլալով) ընտանի է հարցունել թէ՛ յիշեալ քառասուն և այլափ բարեգործ և կանխիկ վճարող ազգայինները արդե՞ք «լքեմ մ'ունէին լուծելու աղքատներն» մինչև Ընդհանուր Ժողովոյ վերջին նստին օրը:

Տ. Լ. Մկրտիչեան ինքն է որ, ասոնց սակայն ուղղակի կերպով զոհացում տալու այս շատ բանաւոր հարցմանց, ստիպուած կ'զգայ ինքզինքը արդարացուցիչ մեկնաբանութիւն մը տալու, ինչպէս վերը արտագրուեցաւ, որ կ'թէ ճշմարիտ է, գէթ փափկանկատութեան տարրական պահանջմանց տրամագծապէս հակառակ կուզայ, որովհետև այնու յիշեալ քառասուն և այլափ անձանց շարժումը կը վերածէ միմիայն և պարզապէս Ընդհանուր Ժողովոյ մէջ նիւթական ստուար թիւ մը կազմելու հասարակ զերին, որպէս զի Տ. Լ. Մկրտիչեան և իւր կուսակցիները գո՛նէ այս անգամ ջանախիշ մեծամասնութիւն մը չահելով «գործերը իրենց ուզած կաղապարին մէջ թափելու» կարող ըլլան:

Կը տեսնէք թէ մինչդեռ Տ. Ա. Ճէվախիբեանին, որ այլ ևս թաղական խորհրդոյ անգամ մը չէ, յիշեալ խորհրդոյ մշտական քարտուղարը պէտք մը չէ տեսած, ինչպէս վերը տեսնուեցաւ, ինչպիսի, լաւագոյն եղանակաւ մը չ'իւրաքանչեւ նոյն իսկ արդի թաղական խորհրդոյ ամենէն ազդեցիկ անդամներուն և ուրիշ «Թաղական»ներու բազմաթիւ խմբի մը նկատմամբ:

Այս կէտը, թէպէտ մինչև հոս միայն և առաջին իր տեսակին մէջ, անաչառութեան սպառցող մըն է ի նրպատտ Տ. Մկրտիչեանի, զոր պարտաւոր եմ նշանակել:

Ինչ որ ալ եղած ըլլայ սակայն նոր անդամներու դիտաւորութիւնն, կամ լաւ եւ՝ կատարելիք գերը Ընդհ. Ժողովոյ վերջին նստին մէջ, արդարև անհերքելի յանցանք մը պիտի ըլլար Տնօրէն Ժողովոյն կամ, որ նոյն է, ըստ Տ. Մկրտիչեանի, ինձ համար, «թէ՛ պէյերուն և թէ՛ ուրիշ նոր անդամներու դրամները մերժել...»:

Եթէ Տ. Մկրտիչեան կրնայ հաստատուել թէ յիշեալ յանցանքը գործած եմ, այս կէտին վրայ ալ իր վկայութեան ճշգրտութիւնը մտածուած կ'ըլլայ և իր ըրած գատապարտութիւնը արդար:

Յ. Յ. ՇՆՈՐՀՔԵԱՆ  
(Շարունակութիւնը տես յաջորդ յաւելուածով):